ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԵՎ ՎԱՋԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. փետրվար ամսվա ընթացքում «Կառուցողական երկխոսության հանձնառություն» Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում իրականացվող «Նոր հնարավորություններ ականապատման պատճառով հողամասերի մեծ մասից զրկված բնակչության համար» ենթադրամաշնորհային ծրագրի կողմից ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանի Այգեհովիտ և Վազաշեն համայնքների բնակչության շրջանում իրականացվել է հայ-ադրբեջանական սահմանին մոտ գտնվող չմշակվող և ականապատված տարածքների հետ կապված շարունակական ուսումնասիրությունը:

ՈՒսումնասիրության համար Վազաշեն և Այգեհովիտ համայնքներում պատահականության սկզբունքով կատարվել է այցելություններ գյուղացիական տնտեսություններ: Ցավալիորեն պետք է նշեմ, որ Վազաշեն համայնքում շրջայցի ընթացքում ականատես եմ եղել բազմաթիվ փակված տների և ըստ հարցման, մոտավորապես 50% և ավելին գյուղից ընտանիքներով արտագաղթել են: Այս անգամ փորձել եմ հարցազրույցս կազմակերպել ավելի երիտասարդ անդամների հետ, որպեսզի նրանց կարծիքը ևս հաշվի առնենք առաջ եկած այս բոլոր խնդիրների շուրջ և ըստ այդմ ծրագրի համար պարզ լինի ամբողջական պատկերը համայնքների վերաբերյալ: Հարցումներ իրականացվել է Այգեհովիտ համայնքում 12, իսկ Վազաշեն համայնքում 14 գյուղացիական տնտեսություններում: Հարցումներին մասնակցել են Այգեհովիտ համայնքում 30-69, իսկ Վազաշեն համայնքում՝ 26-59 տարիք ունեցող անձնավորություններ: Հարցմանը մասնակցել են 18 տղամարդ և 8 կին: Ըստ հարցման արդյունքների Վազաշեն և Այգեհովիտ համայնքներում վերամշակման համար կան նաև մի շարք խոտաբույսեր և ծառերի ծաղիկներ (ուրց, երիցուկ, սամիթ, դաղձ, մասուր, լորենու ծաղիկ, սզնու ծաղիկ), որոնք իրենց շրջապատում շատ-շատ են և օգտագործվում են թեյի արտադրության մեջ: Պատասխանողները միահամուռ ձևով առաջարկում են կառավարությանը տնտեսական հեղափոխությունը առաջնահերթ սկսել սահմանապահ համայնքներից և ցանկանում են մի քանի ուղղությամբ այն իրականացնել իրենց

Scanned by CamScanner

համայնքներում: Իրենք նպատակահարմար են գտնում պտղի և հատապտղի վերամշակման արտադրամասին զուգահեռ հիմնել թեյի արտադրություն, քանի որ թեյի արտադրության կազմակերպման համար անսպառ քանակությամբ խոտաբույսեր կան, որը իր հերթին կբացի աշխատատեղ, իսկ բնակչությունը դրանց հավաքումից ամեն օր կստանա եկամուտ:

Բնակիչներն ականապատված վարելահողերի և բազմամյա տնկարկների համար ոչ մի պետական կառույցի չեն դիմել, գիտակցելով, որ դրա մասին վերադաս բոլոր մարմինները տեղյակ են: Իսկ թե ինչ միջոցներ են ձեռնարկվել ՏԻՄ-երի կողմից այդ ուղղությամբ, բնակչությանը ոչինչ հայտնի չէ, սակայն առ այսօր ոչ մի տեսակի փոխհատուցում չեն ստացել: Ըստ հարցվողների, ականապատված հողերի հաշվով, շուկայական գներով գումարային փոխհատուցում են ակնկալում կառավարությունից: Բացի այդ, որպեսզի սահմանապահ համայնքների բնակիչները ամուր մնան իրենց հայրենի գյուղում, տեղում ունենան աշխատանք և չմտածեն արտագաղթի մասին, այդ իսկ պատճառով ակնկալում են երկարաժամկետ անտոկոս կամ ցածր տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկեր գյուղատնտեսությունը զարգացնելու համար:

Կան դեպքեր, երբ սահմանապահ համայնքների բնակիչները դիմել են ցածր տոկոսով գյուղատնտեսական վարկեր ստանալու համար, սակայն մերժվել են: Օրինակ՝ Վազաշեն համայնքի բնակիչ Արսեն Արշակի Շաղբաթյանը, որը զբաղվում է այծաբուծությամբ (120 գլուխ),անասնագոմ կառուցելու համար մասնակցել է գյուղատնտեսական վարկի համար պահանջվող դասընթացներին, ստացել սերտիֆիկատ, սակայն բանկից անհիմն ձևով մերժել են՝պատճառաբանելով, որ ժամանակավորապես այդ գործընթացը դադարեցված է: Բնակիչը իր դժգոհությունն էր հայտնում այն առումով, որ այդպիսի վարկերը առաջնահերթ պետք է տրամադրվեն հենց սահմանապահ համայնքների բնակիչներին, ովքեր իրականում ցանկանում են զարգացնել գյուղատնտեսությունը, ոչնչով բանկերը չեն աջակցում իրենց և ըստ բնակչի, սահմանապահ համայնքների բնակիչների նկատմամբ կատարվում է ոչ հայրենանպաստ քաղաքականություն, այն առումով, որ սահմանապահ համայնքների մեծ ռիսկայնության պատճառով բանկերը խուսափում են վարկ տրամադրել:

Հարցվողների մեծ մասը տեղյակ չեն Այգեհովիտ համայնքում կազմակերպվող չրերի արտադրության և գինեգործության դասընթացների մասին և իրենց պատրաստակամությունն են հայտնել մասնակցելու համապատասխան մասնագիտական դասընթացներին: Ըստ իրենց, կարողանում են տնական պայմաններում չրեր և գինի պատրաստել, ինչպես նաև օղի թորել, սակայն պատրաստ են իրենց ունեցած գիտելիքներն ու փորձն էլ ավելի կատարելագործել՝ ծանոթանալով ժամանակակից մեթոդներին : Իսկ որ չգիտեն կազմակերպվող դասընթացների մասին, առաջարկում են, որ ՏԻՄ-ի

Scanned by CamScanner

աշխատակիցները համայնքում կատարվող ցանկացած ծրագրի վերաբերյալ հայտարարություն փակցնեն տարբեր թաղամասերում, որպեսզի բնակչությունը տեղեկացված լինի դրանց մասին և իրենց մասնակցությունը ունենան:

Բնակիչներն միահամուտ ձևով իրենց դժգոհությունն են հայտնել ՏԻՄ - հասարակություն փոխհարաբերության վերաբերյալ, քանի որ ՏԻՄ-ի կողմից համայնքային ժողովներ, հանդիպումներ բնակչության հետ չի կազմակերպվում, տեղյակ չեն իրենց համայնքներում իրականացվող ծրագրերի մասին: Երկու համայնքում էլ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք կարելի է լուծել տեղական մակարդակով,սակայն սայլը տեղից չի շարժվում, կարծես թե ՏԻՄ-ը համայնքի խնդիրներով չեն էլ մտահոգվում, իսկ Վազաշեն համայնքի ապագայով ոչ մեկը չի մտածում և կածես թե մոռացած լինեն, որ այսպիսի համայնք կա սահմանի բերանում,այդ իսկ պատճառով էլ օրեցոր շարունակվում է արտագաղթը՝ հատկապես երիտասարդության շրջանում: Սակայն Վազաշենի բնակչությունը մեծ հույսեր է կապում նոր իշխանության հետ, հույս ունենալով, որ իրենց համայնքում կառավարության աջակցությամբ կստեղծվեն արտադրամասեր, որի առկայության դեպքում կբացվեն աշխատատեղեր և այս ձևով կփորձեն սահման պահող համայնքների բնակչությանը ամուր պահել իր հայրենի հողի վրա, հակառակ դեպքում՝ կշարունակվի դատարկվել համայնքները: Իրենց առաջարկությունն է, որ ՏԻՄ ղեկավարությունը հաճախակի կազմակերպեն հանդիպումներ բնակչության հետ, վեր հանեն բնակչության կողմից առաջարկվող խնդիրները և ծրագիր-առաջարկի ձևով ներկայացնեն կառավարությանը կամ միջազգային կազմակերպություններին դրանց լուծման հարցով,այլապես խիստ վտանգի առաջ է կանգնած սահմանապահ համայնքների՝ հատկապես Վազաշենի դատարկման հարցը: Վազաշեն համայնքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրով գործում է 6 հոգանոց կանանց խումբ, ովքեր զբաղվում են ասեղնագործությամբ և հեյյունագործությամբ: Նրանց տրամադրվել է ընդամենը 100 000 դրամի թել և իրենց ձեռքի աշխատանքով ստեղծում են զինու շշերի համար կախազարդեր, բաժակի տակդիրներ, արջուկներ և այլ տեսակի իրեր, որոնք Նորվեգիայի դեսպանի միջնորդությամբ վաճառվում են Երևան քաղաքում գործող «Հոմլանդ» խանութում: Այդ ծրագրի շրջանակներում Նորվեգիայի դեսպանը երկու անգամ այցելել է Վազաշեն համայնք, ծանոթացել խմբի գործունեությանը, ինչպես նաև համայնքի խնդիրներին և ժողովրդին հուզող հարցերին, որը շատ ողջունելի է: Այդ խմբի գործունեությունը ավելի կայանալու և ընդլայնելու համար ՄԱԿ-ի զարգացման ծրագրով շուտով տրամադրվելու է բազմաֆունկցիոնալ կարի մեքենա և ավերլոկ: Ըստ այդ խմբի անդամների, ՏԻՄ-ի

Scanned by CamScanner

ցանկության դեպքում կարող են այսպիսի նոր նախաձեռնությունների համար դիմել տարբեր միջազգային կազմակերպությունների, որպեսզի նմանատիպ ծրագրեր իրականացվեն համայնքում և նոր խմբեր ձևավորվեն:

Համայնքում առկա խնդիրների լուծման համար բնակչությունը միշտ չէ, որ միանշանակ մեղադրում է կառավարությանը, այլ շատ դեպքերում՝ ՏԻՄ-ին, իր անգործունեության համար: Կան այնպիսի աշխատանքներ, որոնց իրականացման համար մեծ գումարներ չեն պահանջվում և կարելի է տեղական մակարդակով լուծել,սակայն չգիտեն թե ինչի, այնպիսի կարծիք է ստեղծվել բնակչության մոտ, որ ՏԻՄ-ը սպասում են թե ինչ որ մեկը պետք է իրենց փոխարեն համայնքի խնդիրներով զբաղվի, ընդամենը ցանկություն է պետք, որպեսզի այդ հարցերը կարգավորվեն: Օրինակ՝ Վազաշեն համայնքում չկա հացաթխման արտադրամաս և հացը ամեն օր համայնք է բերվում Այգեհովիտ և Մարիգյուղ համայնքներից, ուստի առաջարկում են համայնքում հիմնել հացաթխման փոքր արտադրամաս, որպեսզի մի քանի մարդ աշխատանք ունենա և հացի կամ լավաշի պահանջարկի դեպքում բնակչությունը չսպասի, թե երբ են այլ համայնքներից ներմուծելու:

Իսկ Այգեհովիտ համայնքում տեղական մակարդակով լուծելի խնդիրներն են՝ «Ղորղի գլուխ» կոչվող գերեզմանատան ճանապարհի վերանորոգումը, «Թավաբաշ» թաղամասում գտնվող կամուրջի վերանորոգումը և այդ թաղամասից նախկին դպրոց տանող կամուրջի կառուցումը, «Մահմուդ» թաղամասի խմելու ջրագծի վերանորոգումը, «Շեկուտ» թաղամասում 100 մետր գազամուղի անցկացումը և այլն:

Հարցազրուցավար՝ Անուշ Վարդումյան

« 26 » « փետրվար » 2019թ.

Scanned by CamScanner